ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 635

« 23» նոյեմբերի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. նոյեմբերի 22-ի թիվ 101-Ա որոշումը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2018թ. № 101-Ա

## ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ 06-105-0006-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ուռուտ գյուղի բնակիչ Բորիկ Վերմիշի Գաբրիելյանի դիմումը, 17.05.2018թ. թիվ 1374 սեղանամատյանով հաստատված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, 09.11.2018թ. թիվ 2998 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագիծը, ղեկավարելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0006-0006 ծածկագրի տակ գտնվող 2809.4 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0006-0006 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 2809.4 քմ.

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 2809.4քմ. մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց բաժնային սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Բորիկ Վերմիշի Գաբրիելյանին 1/2 բաժնեմասով և Գևորգ Բորիկի Գաբրիելյանին 1/2 բաժնեմասով , իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրանց բաժնային սեփականության իրավունքը, յուրաքանչյուրին 1/2 բաժնեմասով:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի , Ուռուտ գյուղի 06-105-0006-0006 ծածկագրի տակ գտնվող 2809.4քմ. մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 32.44. մակերեսով բնակելի տան կիսանկուղի, 6.04քմ մակերեսով բնակելի տան կիսանկուղի, 64.88քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի , 17.41քմ մակերեսով բաց պատշգամբի, 15.43 քմ. մակերեսով մառանի, 11.03քմ մակերեսով բաց պատշգամբի, 18.00 քմ. մակերեսով ամառային խոհանոցի 45.20 քմ. մակերեսով աստիճանահարթակի, 9.45 քմ մակերեսով սանհանգույցի, 10.51 քմ մակերեսով անասնաշենքի, 36.12քմ մակերեսով անասնաշենքի և 13.60քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Բորիկ Վերմիշի Գաբրիելյանի և Գևորգ Բորիկի Գաբրիելյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը յուրաքանչյուրին 1/2 բաժնեմասերով:

4. Համաձայն 17.05.2018թ. թիվ 1374 սեղանամատյանով հաստատված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, 09.11.2018թ. թիվ 2998 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի անշարժ գույքի ծածկագիրը նշված է 06-105-0006-0015, սակայն համաձայն կադաստրային քարտեզի և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի տեղագրական հատակագծի,անշարժ գույքը գտնվում է 06-105-0006-0006 ծածկագրի տակ:

5. Հաստատել 06-105-0006-0006 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք գյուղ Ուռուտ 12 փողոց, թիվ 13 բնակելի տուն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ.

**2018թ. նոյեմբերի 22**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

⊠ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

**թիվ 636**
**« 23» նոյեմբերի 2018թ.**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝**

**պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. նոյեմբերի 23-ի թիվ 102-Ա որոշումը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » նոյեմբերի 2018թ. № 102-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0037-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.403 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0037-0001 ծածկագրով, 0.403 հա մակերեսով տնամերձին շնորհել ՝ գ. Լեջան 13-րդ փողոց, տուն 13 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

կ.տ

**2018թ. նոյեմբերի 23**
**գ. Լոռի Բերդ**